Հաստատված

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ Տնօրենների խորհրդի

29.07.2024թ. №290724 որոշմամբ

ԿԱՐԳ
«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ

1. Կարգավորման առարկան

1. «ԹԵԼ-ՍԵԼ» բաց բաժնետիրական ընկերության ներքին տեղեկությունների գաղտնիության պահպանման և դրանց բացահայտման կարգը (այսուհետ՝ կարգ) սահմանում է «ԹԵԼ-ՍԵԼ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ ընկերություն) թողարկած արժեթղթերի վերաբերյալ ներքին տեղեկությունների գաղտնիության պահպանման և բացահայտման կարգը:

2. Կարգը մշակված է՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և ընկերության կանոնադրության համաձայն:

2. Հիմնական հասկացություններ

3. Սույն կարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) **ինսայդերական տեղեկություն՝** ցանկացած չհրապարակված որոշակի տեղեկություն, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերաբերում է ընկերությանը, նրա թողարկած արժեթղթերին, և որի հրապարակումը կարող է էական ազդեցություն ունենալ նշված արժեթղթերի և (կամ) դրանց հետ կապված ածանցյալ ֆինանսական գործիքների գների վրա:

2) **ինսայդեր՝** յուրաքանչյուր անձ, որն ընկերության կապիտալում իր մասնակցության, կառավարման որևէ մարմնում իր անդամության, պաշտոնի կամ այլ պարտականությունների կատարման, ծառայությունների մատուցման կամ այլ

պայմանագրային հարաբերությունների կապակցությամբ տիրապետում է ինսայդերական տեղեկությունների:

3. Կիրառման շրջանակը

4. Սույն կարգը կիրառվում է ընկերության կառավարման մարմինների և շահագրգիռ այլ անձանց կողմից:

4. Ինսայդերական տեղեկությունների կազմը

5. Ինսայդերական տեղեկություն են համարվում այն ոչ հանրամատչելի ֆինանսական, հաշվապահական, արտադրական և այլ նշանակություն ունեցող տեղեկությունները, որոնք երրորդ անձին հայտնի չլինելու պատճառով ունեն փաստացի կամ հնարավոր առևտրային արժեք: Այդ տեղեկություններն ընդգրկում են՝

1) ընկերության ֆինանսական հաշվետվություններն ու հաշվապահական հաշվառման փաստաթղթերը.
2) ընկերության եկամուտների, շահույթի/վնասի կանխատեսումները.
3) անկախ գնահատողների հաշվետվությունները.
4) ընկերության ֆինանսական գործունեության արդյունքները, այդ թվում՝ ընկերության ակտիվների և պասիվների զգալի փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվությունը.
5) ընկերության աուդիտորի փոփոխության մասին տեղեկատվությունը.
6) ընկերության նկատմամբ պետական վերահսկող մարմինների և մրցակից կազմակերպությունների գործողությունները.
7) ընկերության խոշոր բաժնետերերի կառուցվածքում էական փոփոխությունները.
8) դատական վեճերում ընկերության մասնակցության վերաբերյալ տեղեկությունները.
9) ընկերության վերակազմակերպման մասին տեղեկությունները.
10) ընկերության կողմից կնքված կամ լուծվող էական պայմանագրերը և այլ գործարքները.
11) ընկերության կողմից արժեթղթերի պլանավորված թողարկումների մասին տեղեկությունները.

12) ընկերության կողմից բաժնետոմսերի պլանավորվող հետգնումների կամ ձեռքբերումների մասին տեղեկատվությունը.

13) ընկերության տնօրենների խորհրդի կողմից առաջարկվող շահութաբաժինների չափի մասին տեղեկությունները.

14) արժեթղթերի շուկան կարգավորող օրենսդրության, ֆոնդային բորսայի կանոնների պահանջներով բացահայտման ենթակա տեղեկությունները՝ մինչև դրանց սահմանված կարգով հրապարակման պահը.

15) ընկերության գործունեության, ընկերության թողարկած արժեթղթերի և դրանցով կատարվող գարծարքների վերաբերյալ այլ տեղեկությունները, որոնք չեն հանդիսանում հանրամատչելի, և որոնց հրապարակումը կարող է ազդել ընկերության կողմից թողարկվող արժեթղթերի գնի վրա:

6. Ինսայդերական տեղեկություն են համարվում ոչ միայն տեղի ունեցած, այլ նաև ապագայում տեղի ունենալիք կամ կանխատեսվող իրադարձություններին վերաբերող՝ սույն կարգի 5-րդ կետում նշված տեղեկությունները:

7. Տեղեկությունը համարվում է հանրամատչելի, եթե տարածված է այնպիսի միջավայրում, որն ցանկացած անձի ապահովում է այն ստանալու հնարավորություն:

5. Ինսայդերների հիմնական պարտականությունները

8. Ինսայդեր է համարվում նաև ներքին տեղեկության տիրապետող, այդ թվում՝ հանցագործության արդյունքում ձեռք բերված ներքին տեղեկության տիրապետող ցանկացած այլ անձ, որը ողջամիտ ուշադրություն գործադրելու դեպքում կարող էր տեղյակ լինել, որ այդ տեղեկությունը հանդիսանում է ներքին տեղեկություն:

9. Եթե ինսայդերն իրավաբանական անձ է, ապա ֆիզիկական անձը, որը մասնակցում է նշված իրավաբանական անձի համար գործարքների կնքման վերաբերյալ որոշումների կայացման գործընթացին, նույնպես հանդիսանում է ինսայդեր:

10. Ինսայդերն իրավունք չունի՝

1) երրորդ անձանց օգտին կատարել ընկերության թողարկած արժեթղթերով գործարքներ կամ դրանց կնքումը պատվիրել.

2) այլ անձանց տրամադրել կամ երրորդ անձանց հասանելի դարձնել ինսայդերական տեղեկությունները կամ դրանց վրա հիմնված այլ տեղեկություններ,

բացառությամբ օրենսդրությամբ, ընկերության ներքին իրավական ակտերով կամ ընկերության և երրորդ անձնաց հետ կնքված գործարքներով նախատեսված դեպքերի.

3) ինսայդերական տեղեկատվության հիման վրա ընկերության թողարկած արժեթղթերով գործարքներ կատարելու կամ չկատարելու վերաբերյալ այլ անձանց տրամադրել խորհրդատվություն:

11. Ընկերության՝ ինսայդերների հետ կնքած պայմանագրերը պետք է պարունակեն կարգով վերջիններիս համար սահմանված պարտականությունները:

12. Ինսայդեր համարվող իրավաբանական անձանց հետ ընկերության կնքած պայմանագրերը պետք է պարունակեն ինսայդերական տեղեկությանը հասանելիություն ստացած անձանց կողմից տեղեկատվության գաղտնիության պահպանման պարտականությունների ստանձման վերաբերյալ հավաստում:

6. Ինսայդերներին պատկանող՝ Ընկերության թողարկած արժեթղթերի վերաբերյալ տեղեկատվության բացահայտումը

13. Ինսայդերները պարտավոր են ընկերությանը բացահայտել ընկերության թողարկած արժեթղթերի նկատմամբ իրավունքներ ունենալու մասին տեղեկատվություն՝ հետևյալ կարգով՝

1) Տնօրենների խորհրդի անդամները, գործադիր մարմնում ընդգրկված անձինք, վերստուգող հանձնաժողովի անդամներն ընտրվելու/նշանակվելու պահից 7 աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում են ընկերությանը.

2) ընկերության համար աշխատանքային կամ մասնագիտական պարտականություն կատարելու, այդ թվում՝ կնքված քաղաքացիաիրավական պայմանագրի ուժով ինսայդերական տեղեկություններ օգտագործելու իրավունք ունեցող անձինք համապատասխան պայմանագրի կնքման պահից 7 աշխատանքային օրվա ընթացքում ընկերությանը ներկայացնում են գրավոր ծանուցում.

3) ընկերության աուդիտորը նրա համապատասխան պայմանագրի կնքման (ընտրելու) պահից 7 աշխատանքային օրվա ընթացքում ընկերությանը ներկայացնում է գրավոր ծանուցում.

4) ներդրումային ծառայություններ մատուցող անձը, ընկերության անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստր վարող անձը համապատասխան պայմանագիր կնքելու պահից 7 աշխատանքային օրվա ընթացքում ընկերությանը ներկայացնում են գրավոր ծանուցում.

5) ինսայդեր իրավաբանական անձանց նկատմամբ պաշտոնավարման կամ այլ կարգավիճակի ուժով ներքին տեղեկություններն օգտագործելու/տիրապետելու իրավունք ունեցող անձինք համապատասխան պայմանագրի կնքման պահից 7 աշխատանքային օրվա ընթացքում ընկերությանը ներկայացնում են գրավոր ծանուցում:

7. Ներքին տեղեկությունների բացահայտման Ընկերության պարտականությունը

14. Տեղեկությունների բացահայտման պահ է համարվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և ընկերության ներքին իրավական ակտերով բացահայտման ենթակա ինսայդերական տեղեկությունների հրապարակման պահը:

15. Ընկերությունը պարտավոր է Հայաստանի Հանրապետությա օրենսդրությամբ, ընկերության կանոնադրությամբ և ներքին իրավական այլ ակտերով սահմանված դեպքերում, կարգով և ժամկետներում բացահայտել ինսայդերական տեղեկությունները:

16. Եթե ինսայդերական տեղեկությունների բացահայտումը կարող է էապես վնասել ընկերության օրինական շահերը, ապա ընկերությունը կարող է իր պատասխանատվությամբ հետաձգել ներքին տեղեկությունների բացահայտումը, եթե դա չի հակասում Հայաստանի Հանրապետությա օրենսդրությանը:

17. Ընկերությունը պետք է ձեռնարկի անհրաժեշտ այնպիսի գործողություններ, որ ներքին տեղեկությունների բացահայտման հետաձգումը չհանգեցնի հանրության ապակողմնորոշմանը և ապահովի ինսայդերական տեղեկությունների գաղտնիությունը:

18. Եթե ընկերությունը, նրա անունից կամ հաշվին գործող անձը տրամադրում է ինսայդերական տեղեկություններ երրորդ անձանց՝ ծառայությունների մատուցման կամ այլ պարտականությունների կատարման կապակցությամբ, ապա ընկերությունը պարտավոր է հրապարակայնորեն բացահայտել դրանք նույն չափով՝ երրորդ անձին տեղեկությունները տրամադրելուն միաժամանակ, եթե տեղեկությունները տրամադրվել են դիտավորյալ: Սույն պահանջը չի տարածվում այն դեպքի վրա, երբ երրորդ անձը, որին տրամադրվել է ներքին տեղեկատվությունը, կրում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ընկերության կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով կամ ընկերութան հետ կնքված պայմանագրով նախատեսված՝ այդ տեղեկատվության գաղտնիությունը պահպանելու պարտականություն:

8. Ինսայդերական տեղեկությունների գաղտնիության պահպանման պարտականությունները

19. Ծառայողական կարգավիճակի ուժով ինսայդերները պարտավոր են պահպանել իրենց հայտնի դարձած Ինսայդերական տեղեկությունների գաղտնիությունը:

20. Ինսայդերական տեղեկությունների գաղտնիության պահպանման պարտականությունները տարածվում են նաև այն ինսայդերների նկատմամբ, որոնք դադարեցրել են իրենց մասնագիտական կամ պաշտոնական պարտականությունները մինչև այն պահը, երբ նրանց ստացած տեղեկությունները պարունակում են ինսայդերական տեղեկությունների հատկանիշներ: Նշված անձինք իրավունք ունեն ինսայդերական տեղեկությունները բացահայտել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և իրենց հետ կնքված պայմանագրերով սահմանված դեպքերում ու կարգով:

9. Ներքին տեղեկությունների պաշտպանությանը ուղղված միջոցառումներ

21. Ընկերությունն իրավունք ունի կիրառել ինսայդերական տեղեկությունների պաշտպանության միջոցառումներ, որոնք ուղղված են դրանց անօրինական օգտագործման կանխարգելմանը:

22. Նշված միջոցառումների կիրառումը նպատակաուղղված է՝

1) ինսայդերների գործունեության նկատմամբ վերահսկողության ապահովմանը՝ նրանց կողմից ինսայդերական տեղեկությունների օգտագործման և տիրապետման նկատմամբ սահմանափակումների կիրառման հիման վրա.

2) ինսայդերական տեղեկատվության օգտագործման և տիրապետման կարգի պահպանմանը, այդ թվում՝ նաև անբարեխիղճ օգտագործման բացառումը.

3) ընկերության նկատմամբ ներդրողների և գործընկերների վստահության բարձրացմանը:

23. Ընկերության կողմից կիրառվող՝ ինսայդերական տեղեկությունների պահպանմանն ուղղված միջոցառումներ են՝

1) ընկերության որոշակի ստորաբաժանումների համար անցագրային ռեժիմի սահմանումը, այդ թվում՝ ոչ աշխատանքային օրերին.

2) ինսայդերների հաշվառումը.

3) ինսայդերական տեղեկություններ պարունակող փաստաթղթերի նշագրումը.

4) ընկերության աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա ինսայդերական տեղեկությունների օգտագործման իրավունքի տրամադրումը կամ սահմանափակումը.

5) ընկերության աշխատակիցներից կամ գործընկերներից ներքին և ծառայողական այլ տեղեկություններ չբացահայտելու վերաբերյալ գրավոր պարտավորագրի ստացումը կամ համապատասխան դրույթների ամրագրումը վերջիններիս հետ կնքվող պայմանագրերում.

6) ներքին և ծառայողական այլ տեղեկությունների մուտքի իրավասության տրամադրումը միայն որոշակի վայրերում.

7) ինսայդերական տեղեկություններ պարունակող և պահպանման ոչ ենթակա բոլոր փաստաթղթերի ժամանակին ոչնչացումը.

8) փաստաթղթերի պահպանման վայրի և աշխատատեղերի պաշտպանության ընթացակարգերի ներդրումն ու պահպանումը.

9) տեխնիկական տեղեկատվական համակարգերի պաշտպանության համակարգերի օգտագործումը՝ սահմանափակելով տեղեկատվության կորուստը և անօրինական, այդ թվում՝ կապի միջոցներով տեղեկությունների մուտքի հնարավորությունները.

10) այլ միջոցառումներ, որոնք ուղղված են ինսայդերական տեղեկությունների հասանելիության սահմանափակումներին:

24. Ընկերությունը Ինսայդերների ցուցակ վարում է «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

25. Ինսայդերական տեղեկությունների պահպանման նպատակով ընկերությունը պարտավոր է՝

1) աշխատակցին գրավոր տեղեկացնել, որ ինսայդերական տեղեկությունների հասանելիությունը իրեն տրամադրվել է աշխատանքային պարտականությունները կատարելու համար.

2) աշխատակցին գրավոր ծանոթացնել ինսայդերական տեղեկությունների օգտագործման՝ ընկերության սահմանած պայմաններին և դրանց խախտման հիմքով նրա նկատմամբ պատասխանատվության կիրառման հանգամանքին.

3) աշխատակցի համար ստեղծել ինսայդերական տեղեկությունների օգտագործման կանոնները պահպանելու պայմաններ.

4) իրականացնել Կարգի պահպանմանն ուղղված այլ գործողություններ:

10. Ինսայդերական տեղեկությունների օգտագործում

26. Ինսայդերական տեղեկությունների օգտագործումն օրինական է համարվում այն դեպքում, երբ դրանք օգտագործվում են ի շահ ընկերության՝ ապահովելով ընկերության գործունեության համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը, ընկերության կանոնադրությանը, ընկերության ներքին իրավական ակտերին, ինչպես նաև ընկերության հետ կնքված պայմանագրերի դրույթներին:

27. Ինսայդերական տեղեկությունների անօրինական օգտագործում է համարվում դրանց ցանկացած օգտագործում, որը խախտում է սույն կարգի 30-րդ կետի պահանջները, այդ թվում՝ ինսայդերական տեղեկությունների օգտագործումն ինսայդերների կամ երրորդ անձնաց անձնական նպատակներով, այդ թվում՝

1) արժեթղթերով գործարքներ կնքման.
2) արժեթղթերի գնման, վաճառքի, պահպանման վերաբերյալ երրորդ անձանց խորհրդատվության տրամադրման.
3) երրորդ անձանց ներքին տեղեկությունների փոխանցման.
4) այլ կերպ Ինսայդերական տեղեկությունների հրապարակման և տարածման: